ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 21-ին

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Ռազմական ոստիկանության խնդիրները

1. Ռազմական ոստիկանությունը, օրենքին համապատասխան, ապահովում է՝

1) հետաքննության իրականացումը զինված ուժերում՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին.

2) զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականխումը, կանխումը և խափանումը***, ինչպես նաև հայտնաբերումը և բացահայտումը***.

3) լիազոր մարմնին ամրացված պետական գույքի պահպանությունը ***և այդ գույքի դեմ ուղղված հակաիրավական գործողությունների հայտնաբերումը, խափանումը և բացահայտումը***.

4) զինված ուժերի տրանսպորտային միջոցների նպատակային շահագործումը և անվտանգ երթևեկությունը.

5) կայազորային մեկուսարանների և կայազորային կարգապահական վաշտերի գործունեությունը, ինչպես նաև այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվել է պաշտպանության միջոց÷.

6) աջակցել զինվորական կոմիսարիատներին զինապարտ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության կամ զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելու գործընթացում:

2. Ռազմական ոստիկանությունը, իր խնդիրներին համապատասխան, աջակցում է զինված ուժերում օրինականության և կարգապահության ամրապնդմանը, զորամասերում ու զինվորական կառավարման մարմիններում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրմանը և իրավագիտակցության բարձրացմանը:

3. Ռազմական ոստիկանությունն իր խնդիրներն իրականացնելիս համագործակցում է իրավապահ մարմինների հետ:

4. Ռազմական ոստիկանության առջև այլ խնդիրներ կարող են դրվել միայն օրենքով:

(4-րդ հոդվածը լրաց. 20.12.17 ՀՕ-3-Ն)

Հոդված 8. Ռազմական ոստիկանության լիազորությունները զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունները կանխելիս և խափանելիս , ինչպես նաև կատարված հանցագործությունները

հայտնաբերելիս և բացահայտելիս

1. Ռազմական ոստիկանությունը զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունները կանխելիս և խափանելիս***, ինչպես նաև կատարված հանցագործությունները հայտնաբերելիս և բացահայտելիս*** իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և հիմքերով՝

1) զորամասից դուրս գտնվող զինծառայողից, ինչպես նաև զինված ուժերի տրանսպորտային միջոցը վարող անձից հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարելու կասկածանքով բավարար հիմքի առկայության դեպքում պահանջելու անձը հաստատող փաստաթղթեր և օրենքով սահմանված դեպքերում բերման ենթարկելու նրանց.

2) զինծառայողից, նրա հրամանատարից (պետից) պահանջելու և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ, տեղեկանքներ, այլ փաստաթղթեր (կամ դրանց պատճենները), իսկ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները, տեղեկանքները և այլ փաստաթղթերը՝ իրավասու անձի (անձանց) համաձայնությամբ.

3) զորամասերի, զինվորական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների պաշտոնատար անձանց ներկայացնելու իրավախախտումների կատարման պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացմանն ուղղված պարտադիր քննարկման ենթակա միջնորդագրեր ու առաջարկություններ:

2. Սույն հոդվածի առաջին մասում օգտագործվող «բավարար հիմքեր» արտահայտությունն ընդգրկում է այն դեպքերը, երբ՝

ա) անձը բռնվել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելիս կամ կատարելուց անմիջապես հետո.

բ) ականատեսները, այդ թվում՝ տուժողը, ուղղակի մատնանշում են տվյալ անձին՝ որպես հանցագործությունը կամ վարչական իրավախախտումը կատարողի.

գ) տվյալ անձի կամ նրա հագուստի, նրա օգտագործած այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են հանցագործությանը կամ վարչական իրավախախտմանն առնչվող բացահայտ հետքեր:

3. Սույն հոդվածով նախատեսված լիազորություններն իրականացնելիս ռազմական ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ օրենքով իր իրավասությանը վերապահված շրջանակներում:

(8-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-62-Ն, փոփ. 01.03.23 ՀՕ-85-Ն)

Հոդված 11.1. Ռազմական ոստիկանության կողմից կայազորային մեկուսարանների և կայազորային կարգապահական վաշտերի գործունեության, ինչպես նաև պաշտպանության միջոց կիրառված զինծառայողների անվտանգության ապահովումը

1. Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային մեկուսարանների գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով ու «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քրեակատարողական հիմնարկների ու ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի վարչակազմերի գործունեությունը սահմանող պահանջներին համապատասխան: Կայազորային

մեկուսարանների գործունեության ապահովման շրջանակներում ռազմական ոստիկանությունն իրականացնում է կայազորային մեկուսարաններից օրենքով սահմանված դեպքերում ժամկետային պարտադիր զինծառայողներին հետագա ծառայությունը շարունակելու համար նշանակված զորամասեր տեղափոխումը՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

1.1. Ռազմական ոստիկանությունը ապահովում է քրեական վարույթ իրականացնող մարմինների գրավոր պահանջի հիման վրա վարույթի շրջանակներում անցնող տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող (ձերբակալված կամ կալանավորված) պարտադիր ժամկետային և այլ զինծառայողների տեղափոխումը և ուղեկցումը վարույթ իրականացնող մարմնի պահանջով մատնանշված վայրեր և կազմակերպություններ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունների մասնակցելու համար:

2. Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային կարգապահական վաշտերում օրենքով սահմանված կարգով գտնվող զինծառայողների կողմից օրվա խստացված ռեժիմով ծառայության իրականացումը՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համապատասխան պաշտոնատար անձանց գործունեությունը սահմանող պահանջներին և օրվա խստացված կարգացուցակին համապատասխան:

3. Ռազմական ոստիկանությունն ապահովում է այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ձեռնարկվել է պաշտպանության միջոց՝ ծառայության վայրը փոփոխելու ձևով, պաշտպանության միջոցի ձեռնարկման ժամանակահատվածում զինծառայողի զինվորական ծառայությունն օրենքով սահմանված կարգով իրականացնելով ռազմական ոստիկանության ենթակա զորամասում:

(11.1-ին հոդվածը լրաց. 20.12.17 ՀՕ-3-Ն)